կոչուել է Զամախի։ Զամախին առողջարար օդ ու ջուր ունենալէն զատ՝ ունի և կրկին ծաղկազարդ գարուն. մին՝ իսկական գարուն ապրիլ, մայիս և յունիս ամիսներումն. իսկ միւսը՝ կիսագարուն՝ համարեա նոյնչափ ծաղկազարդ՝ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներումն։

Ափսոս, որ երկրաշարժը երբեմն, «տապը դուրուր» տալով՝ Զամախու և Զամախեցւոյ վայելչութիւնն տարել է և Զամախին շինել է մի գիւղաքաղաք[1]. բայց Աստուծոյ ողորմութեամբն յուսալի է, որ Զամախին ժամանակին իւր փառքին հասնի, երբ երկաթուղւոյ գիծը բերւի Զամախի, որոյ համար արդէն տէրութիւնը ի նկատի ունի կարգադրելու։

Զամախին ունի 3 գերեզմանատուն. մինը քաղաքի արեւելեան կողմին՝ կից քաղաքին՝ շատ հին. երկրորդը քաղաքի հիւսիսային կողմին՝ շատ նոր, որոյ մօտ է «Բէչարայ Բուլաղ» անունով աղբիւրը. իսկ երրորդը 3,4 հարիւր տարուանից՝ հարաւային կողմումն՝ «Բալախանի» անուամբ, ուր այսօր եւս թաղեն ննջեցեալներն, որոյ մօտ է «Նահնալի Բուլաղ» աղբիւրը[2]։ Զամա-

---

[1]) Կարդալ Շամախեցի Հայ պարոն Շիրվան — Զադէի «Նամուս» վերնագրով գիրքը։

[2]) Այս հին գերեզմանատանը 1892 թուին համաճարակ ախտի ժամանակ թողեցինք մենք եւս մի գերեզման Հայրապետ եղբօրս համար, որոյ սապանագիրն է հետեւեալն.

ՏԱՊԱՆԱԳԻՐ ՀՈՅՐԱՊԵՏԻ ՍՄԲԱՏԵԱՆՑ

1 — Ի տապանիս եղաւ մարմին՝
Հոգին դարձաւ առ Աստուած՝
2 Նախ՝ջեւանցի Հայրապետի՝
Տոնմին պատուական Սմբատեանց.
3 — Եղբայր էր սա Առաջնորդին՝
Մեծի արհեստն Մեսրոբայ.
4 — Եւ գործավար եւ բարտուղար՝
Նմին զոլով յարակայ։